

ՄԷԼԵՏԱՔԵՐ



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՆԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1896

ԹԻՒ 8

ԿԱՊԻԿԸ ԵՒ ԿԱՏՈՒՆԵՐԸ

Երկու անօթի կատուններ կտոր մը պանիր դտան, բայց չկրնալով միաբանիլ և բաժնել իրենց մէջ, դատարան դիմեցին ուր դատաւորի պաշտօն կը վարէր խարդախ և նենգաւոր կապիկ մը: Կապիկը աչքը ակնոց և գլուխը կեղծամ (ֆերոֆ) դրած էր և շատ իմաստուն կ'երևնար: Կշիռը ձեռքն առաւ, և պանիրը երկու կտորի բաժնելով դրաւ կշիռին երկու թաթերուն մէջ: “Այո,” ըսաւ դատաւորը, “այս կտորը միւսէն ծանր է,” և խաճնելով մեծ կտոր մը փրցուց անկէ և կերաւ, “որպէս զի,” ըսաւ, “կտորները հաւասարին:” Հիմա կշիռին միւս թաթը ծանր կու գար. այս բանը արդար դատաւորին պատուակ (շփոթ) մը եղաւ ուրիշ մաս մըն ալ խաճնելու միւս կտորէն:

“Կեցիր, կեցիր,” պռապցին կատունները, “մէյմէկ կտոր տուր մեզի մնացածէն և գոհ կ'ըլլանք:” “Եթէ դուք գոհ ըլլաք, արդարութիւնը չըլլար, օրէնքը պէտք է որ ճշդիւ գործադրուի:” Ասոր վրայ մէյմը մէկ կտորէն, մէյմը միւս կտորէն խաճաւ, մինչև որ գրեթէ պանիր չմնաց: Այն ատեն կատունները աղաչեցին որ ուրիշ նեղութիւն չաւելցնէ, այլ ինչ որ մնաց ետ դարձնէ իրենց:

Կապիկը պատասխանեց. “Մենք ինչպէս ուրիշներու՝ նոյնպէս ալ մեր անձերուն իրաւունք և արդարութիւն ընելու պարտական ենք, և մնացածը ինձի կը պատկանի՝ վասն զի դատաւոր եմ,” ըսելով բերանը նետեց մնացածն ալ և ամենայն լրջութեամբ փակեց ատենանը:

Այս առակին բարոյականը պարզ է, սիրելի բարեկամներ: Աւելի աղէկ է մեր իրաւունքին մէկ մասը կորսնցնել քան ամբողջը:



ՀԱՍՏԱՏ ԿՅՅԻՐ

Անգղիացի ծովակալ մը որ իր բարձր գիրքին արժանացած էր միայն իր յարատեւ աշխատութիւնովը, սովոր էր ակտորժող պատմելու թէ՛ երբ կը մեկնէր իր խոնարհ բնակարանէն նաւու


մէջ ծառայութեան մտնելու համար, իր վարձքով նստած տան տէր կինը Աստուածաշունչ մը և Անգղ. ոսկի մը նուիրեց իրեն, ըսելով, “Աստուած օրհնէ քեզ և յաջողութիւն տայ քեզի, տղաս: Որչափ որ կ'ապրիս, երբեք ստակ մի՛

վատներ կամ աղօթելէ ետ մի՛ կե-
նար չձաղրուելու համար :” Գեոա-
տի նաւաստին խնամով հետեւեցաւ
այս խրատին իր բոլոր կեանքին մէջ,
և պատճառ ունէր ուրախ ըլլալու որ
այդպէս ըրաւ . մինչ հազարաւորներ
ցաւցած են , բայց ուշ , տարբեր ըն-
թացք բռնելուն համար :

Երբեք մի թողուր որ քու համեստ
համոզումներուդ վրայ խնդան ուրիշ-
ները : Հաւատարիմ եղիր քու անձիդ ,
և վերջը ոչ միայն պիտի յարգուիս
աշխարհէն , այլ պիտի վայելես խղճ-

Հնդկաստանի ամէն կողմը , և իրենց հա-
ւատքը Պրահմանականութեան և Պուտ-
տայականութեան մէկ խառնուրդն
է : Այս աղանդը 1,700 տարուան չափ
հին կը ճանչցուի . բայց կարծողներ ալ
կը գտնուին թէ Պուտտայականութե-
նէն ալ հին է , ըսել է թէ մինչև
Քրիստոսէ 600 տարի առաջ կար : Այս
կրօնքը գաւանդներուն շինած տա-
ճարներէն մէկը կը ցուցուի այս պատ-
կերին մէջ : Բայց այս կը ներկայացնէ
տաճարին սիւնաղարդ գաւիթը միայն ,
բուն շէնքը քանդուած և կորսուած է :

բորգութիւն կ'ընէի : ձեռք ցանելու
ժամանակ էր , և ճամբուս երկու կող-
մերը կը տեսնէի մարդիկ որ սերմ կը
նետէին նոր փորուած արտերուն մէջ :
Այս տեսարանը ինձ մտածել տուաւ
թէ այդ մարդիկը ինչպէս հոգածու
ըլլալու են իրենց ցանելու սերմը ընա-
րելու մէջ : Կը խորհէի , «ինչ որ կը
ցանեն . վստահ են թէ նոյնը պիտի
բուսնի : Չեն կրնար աղէկ ցորեն հա-
նել գէշ սերմ ցանելով , ինչպէս որ
միայն գէշ ունակութիւններ ցանող
աղայ մը չկրնար մեծնալ և բարի մարդ
մը ըլլալ :”



մրտանքիդ քեզի տուած գովեստը :
Նայէ որ՝ թէպէտ կորսնցնես ստակ ,
դիրք և կամ համբաւ՝ չկորսնցնես քա-
ջութիւն , համեստութիւն , ճշմարտա-
խօսութիւն և հաւատարմութիւն :

ՃԵՑՆԵՐՈՒՆ ՏԱՃԱՐԸ ԿՈՒԱԼԻՈՐԻ ՄԷՁ

Հարաւային և արևելեան Ասիոյ եր-
կու մեծ կրօնքներն են Պրահմանակա-
նութիւնը և Պուտտայականութիւնը :
Առաջինն է Հնդկաստանի գլխաւոր
կրօնքը , և վերջինը՝ Չինաստանի, Պիր-
մանիոյ և Միամու կրօնքն է :

Կայ աղանդ մը զոր գաւանդները կը
կոչուին ձէյն : Ասոնք տարածուած են

Արձանագրութենէ մը կ'իմացուի թէ
չինուած է 1093 թուականին : Գաւի-
թը այնպէս հոյակապ և զարդարուն
է որ չենք կրնար չցաւիլ ամբողջ շէն-
քին մնացած չըլլալուն համար : Տա-
ճարը կը կանգնէր կուայիորի մէջ բարձր
ժայռի մը վրայ : Անոք վրայով գրած
ենք անցեալ տարի Մարտ ամսոյ Տղա-
յոց Աւետիքէին մէջ ուր դրած ենք
նաև պատկերը վիշնուի մէկ տաճա-
րին որ կառուցուած է նոյն քաղաքին
միջնաբերդին մուտքին մէջ :

ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԱՆՆԸ

Անցեալ գարնան Միացեալ Նա-
հանգներուն արևմտեան կողմը ճամ-

Նրադհասակ բարեկամներս , այս
բանին վրայ խորհած էք : Ըսած է մեծ
հեղինակ մը . «Մենք ամէնքս ալ ու-
նակութիւններու խորձեր ենք :” Ի՞նչ
մեծ կարեորութիւն ունի մեր բա-
րի ունակութիւններ կազմելը , ու-
նակութիւններ՝ ճշմարտախօսութեան ,
պարկեշտութեան , բարեխառնու-
թեան , մաքրութեան , և բոլոր աղ-
ծիւ ընթացքներու որոնք հետզհետէ
մեզ պիտի ընեն ազնիւ սկզբունքնե-
րու տէր մարդիկ և կիներ :

«Ինչ որ մէկ մարդ մը կը տեսնէ՝
նոյնը պիտի հնձէ ,” Մուրք Գիրքին
խօսքն է : «Մն որ մարմինին կը սեր-
մանէ՝ ան մարմինէն ապականութիւն
պիտի հնձէ , ու ան որ Հոգիին կը սեր-

մանէ, ան Հոգիէն յաւիտենական կեանք պիտի հնձէ:”

Մանկութիւնը և պատանեկութիւնը ցանկերու ատենն է, ծերութիւնը՝ հնձելու ատենն է: Սիրելի տղաք ու աղջիկներ, նայեցէք թէ ի՞նչ կը ցանէք: Եթէ ձեր տակաւին դեռահաս եղած ժամանակը բարի ունակութիւններու մաքուր սերմերը միայն ցանէք, երջանիկ պիտի ըլլաք թէ՛ հօս թէ՛ հան. դերձեալին մէջ. և աշխարհ աւելի ազէկ աշխարհ մը պիտի ըլլայ ձեր ներկայութեան պատճառաւ:

ԱՌԱՆՁՈՒՆ ՏԵՂ ՄԸ

Հարաւային Խաղաղական Ուժերու Կոմիտէի մէջ Նոր Զեւանայէ Իբր 200 մղոն հարաւ կ'իյնան խումբ մը կղզի-


նաւապետ մըն էր նա որ իր նաւազներէն ողջ մնացող վեց անձերու հետ տարի մը անցուց հոն: Աւելի վերջերը Սմերիկեան Զորավար Կրօնի նաւուն 83 նաւաստիներէն 13ը այդ կղզին ապաստանեցան: Հոն քանի մը ամիս մնալէ ետքը իրենց մէջ ազատման յոյսը տկարացաւ, և իրենցմէ չորս հոգի յանձնառին փոքրիկ նաւակով մը Նոր Զեւանա անցնիլ: Անոնց վրայով ալ բան չլսուեցաւ, բայց կղզին մնացողները վերջապէս ազատուեցան դիպուածով հոն հանդիպող նաւու մը միջոցաւ: Ուտելիքի կողմանէ չէին նեղուեր, վասն զի հոն կը գտնէին ոստրէներ, վայրի կենդանիներ և թռչունի հաւկիթ առատօրէն, բայց գրեթէ ան-

ախոռի մէջ և օրօրուիլ մտուրի մէջ: Եւ այսպէս փորձառու եղաւ մանկութեան ուրախութիւններու և մանկութեան ցաւերու:

Գիտենք թէ փոքրիկ մանուկ մը ի՞նչ պէս կը սիրոյնէ ինքզինք, կը գրաւէ մեր սիրտերը: Գեռահասակ և ծերունի, մեծ և պզտիկ, բարի և չար, ամէնքն ալ կը սիրեն փոքրիկ տղաքները: Եւ այսպէս երբ Գրիստոս աշխարհ եկաւ, երկինքէն իջած հրեշտակները, դաշտին մէջ իրենց հօտերուն վրայ հսկող հովիտները, Սիմէօն և Աննա տաճարին մէջ, և Արևելքէն եկող մոգերը, ամենքն ալ սիրեցին այս օրհնեալ մանուկը:

Երբ փրկիչը մեծցաւ մարդ եղաւ, երբեք չդադրեցաւ պզտիկ տղաքը սիրելէ: Պզտիկ տղաք Ովաննաներով դիմաւորեցին զանիկա երբ եկաւ: Նա բժշկեց անոնց հիւանդութիւնները, բազուկներուն մէջ առաւ զանոնք և օրհնեց. մեծ խոստումներ ըրաւ անոնց և ըսաւ իր աշակերտներուն, «Թէ որ դարձի չգաք և տղոց պէս չըլլաք, երկինց թագաւորութիւնը բնաւ պիտի չմտնէք:”

Տղայոց Տէրը հիմա վերն է բարձրերուն մէջ, կը նստի Աստուծոյ աջ կողմը, բայց չմոռնար պզտիկ տղաքները: Ան որ ժամանակաւ խոնարհ վիճակի մէջ ծնած մանուկ մըն էր, չմոռնար աղքատներուն ու կարօտեալներուն տղաքը. ան որ ժամանակաւ



ներ որ կը կոչուին Ուրանա կղզիներ: Անոնց մէջ կայ գլխաւոր կղզի մը իբր 24 մղոն երկայնութեամբ և քանի մը ուրիշ մանր կղզիներ: Ասոնք անմարդաբնակ են: Ատեն ատեն առժամանակեայ կերպով կը գտնուին հոն նաւաբեկեալ նաւաստիներ: Եւ օրովհետեւ մնացուն բնակիչ չգտնուիր հոն, հարկաւ ըլլատուն ալ չգտնուիր. և թէպէտ այս կղզիները Ովիտանոսի կանոնաւոր վաճառականութեան ճամբուն վրայ չեն իյնար, սակայն կէտ որսացողներու ոչ սակաւ նաւեր և ուրիշ նաւեր մթութեան մէջ անոնց ժայռուտ ծովերը ըջուած են: Այս պատկերը կը ներկայացնէ նեղուցը որ կը զատէ գլխաւոր կղզին աւելի փոքր, Ատամս, կղզիէն որ անկէ դէպ հարաւ կ'իյնայ. Խաչ մը շքեղապէս կանգնուած է թերակղզիի մը վրայ, որ նաւապետ Մըլիքէյի անունը կը կրէ: Անդդիացի

տանելի էր սա մտածութիւնը թէ իրենք դուրսէ միշտ պիտի մնային այդ անմարդաբնակ տեղը և իրենց վրայով լուր պիտի չառնէին բարեկամները: Նաւաբեկութեան հանդիպող ուրիշ նաւաստիներ ալ ազատուած են նոյն կղզիներէն:

ՊԶՏԻԿՆԵՐՈՒՆ ՏԵՐԸ

Երկինքի ու երկրի Տէրը խոնարհեցաւ և իր վրայ առաւ մեղանշական մարմինի նմանութիւնը և մեզի համար պզտիկ տղայ մը եղաւ: Կրնար երկիրս գալ յաղթական թագաւորի մը պէս, հզօր դիւցազնի մը պէս, պայծառութեամբ շողողացող հրեշտակի մը պէս: Կրնար գալ փոթորիկով ու մրրիկով, որոտումներով և փայլակներով, բայց ընտրեց գալ փոքրիկ մանուկի մը կերպարանքով, ծնանիլ

չնորհալի տղայ մըն էր, որ կ'աճէր իմաստութիւնով և Աստուծոյ ու մարդոց առջևը շնորհք գտնելով, չմոռնար ուրիշ տղաքները որոնք ճիշդ այնչափ մեծցած են որչափ նա մեծցած էր այն ատեն: Եւ ուստի թէպէտ տղաք կրնան մոռցուիլ կամ զանց ըլլալ այս աշխարհին մէջ իրենց բարեկամներէն և ընկերներէն, թէպէտ կրնան երեսէ ձգուիլ և մերժուիլ, նա ըսած է իր աշակերտներուն, «Չգոյշ կեցէք որ չանարգէք աս պզտիկներէն մէկը. քանզի կ'ըսեմ ձեզի որ երկինց մէջ անոնց հրեշտակները միշտ կը տեսնեն իմ Հօրս երեսը՝ որ երկինքն է:”

Ուրեմն տղաք կրնան գալ Անոգ. Նա գիտէ և կը ճանչնայ զանոնք, կը սիրէ զանոնք, կը սպասէ օրհնել զանոնք, կ'ուզէ առաջնորդել զանոնք հօտի պէս, և դառնումները գիրկն առնել և բազուկներուն վրայ կրել, և

վերջապէս բերել երկնաւոր փարախը ուր Աստուծոյ բոլոր հօտը պիտի միանան և ա՛լ պիտի չբաժնուին :”

ՈՍԿՈՐՆԵՐՈՒ ՏՈՊՐԱԿԸ

Այս, ազարակատէր կղեմէս իր տկար, ծերացած ձին որ իրեն ծառայած էր հաւատարմութեամբ տասնըւոր տարի, տունէն դուրս ճամբուն վրայ տեղ մը թող տուած էր որպէս զի ինք իր սակաւ մտունդը ճարէ . ի՞նչ թշուառ արարած էր այդ ձին, իր կոշտ ծածկոյթով, կնճռոտած բաշերով, ցցուած ոսկորներով որ կարծես դուրս պիտի ելլէին մորթէն, և այս ամենուն վրայ մէկ աչքն ալ կոյր էր :

Կծծի մարդ մըն էր Ազարակատէր կղեմէս, «Ժամանակները գէշ են», կ'ըսէր, «ուտելիքը՝ նուազ, և ուտի ծերուկ անասունը պէտք է ինքզինք հոգայ :”

«Ոսկորներու տոպրակ» կը կոչէին տղաքը դուրս ձգուած այն կենդանին, և կը գտնուէին անխորհուրդ պատանիներ ալ, որոնք հաճոյք կը զգային խեղճին հետը իյնալով և նեղելով զայն :

Գետինը ծածկուած էր աշնանային պայծառ գոյնզգոյն տերեւներով, և մնաքուր օդը լեցուն էր կենդանութեան ցնձով ինչու : Գարոցը արձակուած էր, և երբ վարժուհին, Օրիորդ Անթառամ, տուն կ'երթար, սիրտն ալ զուարթութեամբ կը համապատասխանէր բոլորայիջի գեղեցկութեան : Լոտրով սորոմագին հեծութիւն մը, շուրջը նայեցաւ և ահա տեսարան մը որ բարկութեամբ լեցուց զինք . խեղճ «Ոսկորներու Տոպրակ» ինուսերուն շատ մը վերքերէն արիւն կը վազէր, թշուառ կենդանին գետին կ'իյնար, և յետոյ ցաւագին ճիգերով կը քաշկուտուէր և կը ջանար ոտք ելլել, որպէս զի նորէն չարչարանք կրէր անխորհուրդ պատանիներէն որոնք փուշեր տատակներ առած կը զարնէին մինչև անոր երեսներուն անգամ :

«Մի՛ . ի՞նչպէս կը համարձակիք Աստուծոյ արարածներէն մէկը չարչարել, Ձէ՞ք գիտեր թէ հաշիւ պիտի տաք ձեր այս խեղճ մունջ անասունին չարչարուելուն պատճառ ըլլալուն համար», պոռաց Օր. Անթառամը : Զգացումներէն յաղթուելով չկրցաւ զսպել արցունքները, իսկ տղաքը իսկապէս ամչցած իրենց անգութ զրօսանքէն, կը կանգնէին և իրենց ոտքերը փոշիին կը զարնէին, չգիտնալով թէ ի՞նչ ընէին, կենային այն տեղը թէ փախչէին :

«Ո՛հ, տղաք, ի՞նչպէս կրնաք ընել այսպիսի բան», ըսաւ Օր. Անթառամ մինչ Ոսկորներու Տոպրակը կը կազարանդէին : «Մեր միտքը գանձիկա փասել չէր, այլ քիչ մը նեղել», ըսաւ Արսէն, «երէկ բուն մը վարսակի յարկ տուի անոր :” «Շատ կը ցաւիմ որ այդպէս անգութութեամբ վարուեցայ խեղճ կեն-

դանիին հետ», ըսաւ Արշամ, «բաւական չարչարուեցաւ :”

«Իմն են դաշտի բոլոր գազանները, կ'ըսէ Տէրը, և ինք կը հոգայ զանոնք», շարունակեց Օր. Անթառամը : «Ինչո՞ք թէ այս ձին գնէք Ազարակատէր կղեմէսէ, թերևս կու տայ ձեզի, վասն զի իրօք չկրնար պահել զայն, փողոցը ձգած է որպէս զի մեռնի : Եթէ կրնաք առնել զայն, ես պիտի խնդրեմ հայրէն որ բակին ետեւի տաքուկ խրճիթը մեզի տայ, և ջանանք խեղճ կենդանիին վերջին օրերը հանգիստ անցնել տալ որչափ որ կարելի է :”

«Ուրախութեամբ պիտի ընենք այդ բանը», ըսաւ Մուշեղ, որ ցարդ լուսթիւն պահած էր, «բայց ստա՛կը ուրկէ պիտի գտնենք : Ստաց ինչ կայ այս կողմերը :” «Տեսնանք», ըսաւ Օր. Անթառամ, վայրկեան մը խորհուրդներու մէջ ընկղմած, «ասա հոն փայտ կայ զոր պէտք է դալրոցին մասանը կրել և լաւ մը շարել : Այդ գործը կրնամ ձեզմէ մէկուն յանձնել, միայն քառօրդ մէճիտ կ'արժէ աշխատութիւնը, բայց այդ բաւական է առ այժմ գործի սկսելու համար :”

«Ազարակատէր Թովմաս չարաթը քառօրդ մէճիտ կու տայ իր կովը կլծելու համար առաւօտները», ըսաւ Համբարձումը : «Մենկողնէս կանուխ ելլել չեմ ուզեր, բայց կարծեմ պիտի ջանամ ելլել :”

«Շատ աղէկ, տղաք, վատհ եմ թէ պիտի յաջողիք», ըսաւ Օր. Անթառամ բերկրութեամբ, «մանաւանդ եթէ խնդրէք Տէրոյմէն օրհնել ձեր աշխատութիւնները :”

Վարժուհին զուարթութեամբ մնաք բարով ըսաւ և գնաց այն տեղէն, և տղաքը ժամանակ մը խօսակցելէն ետք որոշեցին որ շուտով Ազարակատէր կղեմէսի դիմեն :

Մարդը ի՞նչպէս բացաւ աչուրները երբ առաջարկուեցաւ իրեն ծախել իր ծեր ձին : Ձրի տալու սովորութիւնը չունէր երբեք : Ետ քայց իր յարդէ պատառատուն գլխարկը ճակատէն և գլուխը ուժգին քերեց, իբր թէ մտածելու համար իր բթացած ուղեղով . յետոյ քթին սակէն շատ մը ձայներ հանելէ ետքը ըսաւ, «Տղաք, գիտէք որ հիմա անասունները յարգի են . եթէ սպասեմ, կրնամ լաւ գնով ծախել զանիկա, բայց եթէ կու տաք երկու մէճիտ, ձին ձերն է :”

Տղաքը ետ դացին լուրը Օր. Անթառամի հաղորդելու :

«Ես ձեզի փոխ կուտամ ստակը», ըսաւ Օր. Անթառամ, նա թերևս փոխէ միտքը եթէ սպասէք ստակը վաստրկելու համար և պիտի ուղէ որ աւելի վճարէք :”

Այդ նոյն գիշերը ձին մինչև ծունկերը ընտիր խտով մէջ կը գտնուէր, և հանգիստ տեղ մը ունեցաւ գիշերը պառկելու համար : Ամէն օր իր հին չարչարելները նուէրներ կը բերէին,

ինձոր, տաքուկ թեփ, վարսակի յարդ, և զանազան ուտելիքներ, և ամէն ալ կ'ըսէին թէ ձին կը մատուցանար և կ'աշխոյժար : Տղաքը խղճի մտօք կատարեցին իրենց խոստումը :

Աշնան պայծառ օրերը թռան գացին, և ցուրտ ձմեռը եկաւ իր առաջին ձիւնը բերելով, «Ոսկորներու Տոպրակ» իր աչքերը գոցեց յաւիտեան ցաւով և չարչարանքով, և դադարեցաւ ապրելէ այն կենսերով որուն վերջին օրերը զղջացող տղաքը այնքան հանգստաւէտ ըրած էին :

ՆՈՅՆ ՏԵՍԱԿ ՃԱՇ ՌԻՆԵՅԱՆ


Բոլոր աշխարհի վրայ կիներ և մանուկներ կան անթիւ անհամար, որոնք անուղղակի կերպով կը տառապին այն մեծ չարիքին, անառակութեան, երեսէն : Անգամ մը կին մը իր ամուսինի գէտ կ'ապստամբի և անոր կ'ըսէ պարզ ճշմարտութիւնը :

Հետեւեալ իրողութիւնը կը պատմուի մարդու մը վրայով որ իրեն ունակութիւն ըրած էր յաճախ ցերեկներ և գիշերներ անցընել գինետունները և խաղի տունները, և տեսակ տեսակ մեղանչական զրօսանքներու տալ ինքզինք : Օր մը մինչ իր մոլի ընկերներուն հետ կը գտնուէր գինետան մէջ, իր կինը ներս մտաւ ձեռքը պնակ մը բռնած : Երբ մարդը զարմանքով վեր նայեցաւ, կինը ըսաւ, «Խորհեցայ թէ, քանի որ այնքան զբաղած ես որ ժամանակ չունիս ճաշի գալու, բաժնիդ հոս բերեմ :” Եւ պնակը սեղանին վրայ դնելով ինք հանդարտութեամբ դնաց :

Մարդը բոլորաթիւր գտնուող ընկերները հրախրեց գալ և մէկտեղ ճաշել : Երբ պնակին կափարիչը վեր առաւ, անոր մէջ գտաւ լիկ թուղթ մը որուն վրայ գրուած էր, «Սիրելի ամուսինս, կը յուսամ թէ կը հաւնիս այս ճաշին : Այս տեսակէն է տան մէջ կնոջը և զավկներուդ ունեցած ճաշը :”

Կրնայ երևակայուիլ թէ ի՞նչպէս գէշ եղաւ մարդը : Պարագան շատ տխուր էր : Անթի կինը և տառապող զավակները այս ծոյլ և թշուառ մարդուն աչքին առջև եկան :

Ամերիկայի Մեխիկոնարայ Արտօնատէր ձ Տնօրէն—Խմբագիր Յինճանքըլար Եդուլը



ԿՈՍՏԱՆԴՆ

Ի ԳՐԱՐԱՆԻ Ա. ԾԱԿՈՒ ԳՈՅԱՅԵԱՆ